



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾՆԵՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻԶՈՋՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԳ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ.փոստ՝ meo@ypc.am

2015 թվականի մայիսի 16-ին ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած ԶԼՄ-ների ներկայացուցիչների ընդհանուր ժողովում հաստատված՝ Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրի 3.5 կետում նշվում է. «Մահմանել սոցիալական ցանցերում խմբագրության աշխատակիցների վարքի կանոնները և հետևել դրանց պահպանմանը»:

Ընդհանուր ժողովի ժամանակ առաջարկություն եղավ, որ Դիտորդ մարմինը նախապատրաստի մի ուղեցույց փաստաթուղթ, որի հիման վրա յուրաքանչյուր լրատվամիջոց ինքը կմշակի սոցիալական ցանցերում իր աշխատակիցների վարքի կանոնները:

Ստորև ներկայացնում ենք այդ ուղեցույցը:

Այն զուտ խորհրդատվական փաստաթուղթ է: Լրատվամիջոցներն ազատ են ուղեցույցի դրույթների հիման վրա մշակելու իրենց կանոնները՝ օգտագործելով այս սկզբունքներն ամբողջությամբ, դրանցից մեկը կամ մի քանիսը միայն:

ՈՒՂԵՑՈՒՅՑ

սոցիալական ցանցերում խմբագրությունների աշխատակիցների վարքի կանոնների վերաբերյալ

Տեղեկություն տարածելու կամ անձնական նպատակով սոցիալական ցանցերից օգտվելիս միշտ պետք է հիշել, որ դուք, ամեն դեպքում, տվյալ լրատվամիջոցի ներկայացուցիչ եք, ուստի ձեր վարքը կարող է ազդել լրատվամիջոցի հեղինակության վրա: Հետևաբար, հարկ է առաջնորդվել որոշակի կանոններով:

1. Վստահելիություն

Սոցիալական ցանցերում լսարանի հետ ավելի անմիջական և մտերմիկ շփվելու դեպքում էլ չպետք է մոռանալ, որ պետք է պահպանել լրատվամիջոցի հեղինակությունը: Սոցիալական ցանցում տարածած ամեն հղում կամ գրած ամեն մեկնաբանություն հանրային տեղեկություն է՝ անկախ նրանից, թե դիտելիության ինչ կարգի սահմափակումներ են դրվել:

Լրատվամիջոցի ներկայացուցչին խորհուրդ չի տրվում սոցցանցերում տարածել հայտարարություն կամ կատարել գրառումներ, որոնք կարող են ընկալվել որպես քաղաքական հայացքների, ռասայական, սեռական, կրոնական կամ այլ հիմքով խտրականության դրսևորում: Սա վերաբերում է նաև տեղադրվող լուսանկարին և տեսանյութին:

Եթե ցանցում կատարված որևէ գրառում կարող է կասկածի տակ դնել մասնագիտական օբյեկտիվությունն ու բարեխղճությունը, ապա ավելի լավ է ձեռնպահ մնալ այն հրապարակելուց:

2. Խուսափել շահերի բախումներից նաև սոցցանցերում

Լրագրողներին ու խմբագիրներին խորհուրդ չի տրվում իրենց ցանցային էջերին տեղադրել քաղաքական կամ կուսակցական նշաններ կամ դրոշմներ: Նրանք պետք է հետևեն, որ իրենց էջում հայտնված՝ այլ անհատների կամ կազմակերպությունների տեղադրած տեքստերը չհակասեն այս սկզբունքներին:

Հատկապես պետք է ուշադիր լինել ցանցում որևէ խմբի միանալիս կամ որևէ անձի հետևորդը դառնալիս: Եթե լրագրողը լուսաբանում է որևէ ոլորտ, ապա ցանկալի չէ, որ նա անդամակցի հանրային որևէ նախաձեռնության կամ խմբի, որը պաշտպանում է այդ ոլորտում եղած հատուկ շահերը: Նման խմբերին անդամակցումը կարող է հետապնդել միայն անցուդարձին տեղյակ լինելու նպատակ: Միշտ պետք է հիշել, որ սոցցանցային ակցիաներին մասնակցելը եւս կարող է շահերի բախում առաջացնել:

Շահերի բախումից խուսափելու նպատակով, ձեռնպահ մնալ սոցիալական ցանցերում լրատվամիջոցի խմբագրական քաղաքականությանը հակասող կարծիք հայտնելուց, եթե նման քաղաքականությունն արձանագրված է տվյալ աշխատակցի ստորագրած որևէ փաստաթղթով:

Անընդունելի է նաև խմբագրության աշխատակցի կողմից լրատվամիջոցում իր արտահայտած տեսակետներին հակասող կարծիք արտահայտելը սոցիալական ցանցերում:

3. Ներքին խնդիրներ

Խուսափել սոցցանցերում խմբագրության ներքին հարցերը՝ նյութ գտնելու և նյութ պատրաստելու սկզբունքները, նյութը հրապարակելու կամ չհրապարակելու որոշումների խոհանոցը քննարկելուց: Սա վերաբերում է նաև լրատվամիջոցի բիզնես գործունեության մասին տեղեկություններին և այդ մասին ներքին կարծիքներին:

4. Թափանցիկություն

Անկախ այն բանից՝ սոցիալական կայքերը ծառայում են որևէ բան հրապարակելուն, թե անձնական նպատակներին, միշտ պետք է՝

- սոցիալական ցանցում գործածել ամբողջական անունն ու պաշտոնը,

- հղում անել նյութերի սկզբնաղբյուրներին՝ կցելով ակտիվ հիպերլինքեր,
- վերատարածվող տեքստում լուրը և տեղեկությունը հստակորեն տարանջատել կարծիքից:

5. Ստուգել սոցիալական ցանցերի տեղեկությունները տարածելուց առաջ

- Ստուգեք փաստերը: Սոցիալական ցանցերում հայտնված տեղեկությունները հարկավոր է ստուգել, ինչպես լրատվության մեջ է ընդունված:
- Փաստերը կամ մեջբերումները վերատարածելուց առաջ աշխատեք ճշտել մարդկանց և կազմակերպությունների իսկությունը:
- Ուղղեք սխալները: Եթե թյուրիմացաբար վերատարածել եք սխալ տեղեկություն, հաջորդ իսկ գրառման մեջ հարկ է ուղղել սխալը և, հնարավորության դեպքում, ավելի ճշգրիտ հղում կցել:

Ընդունվել է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի 2015 թվականի հուլիսի 23-ի նիստում